



## ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՄԻՐԱԿԱՆ

ԳՐՈՅ. Հ. ԱՃԱՌՅԱՆ

### ՄԵՍՐՈՓ ՄԱՇՏԱՑՈՑ\*

Եթե վրաց կրոնական գրականությունը ուշ է սկսվում, բնական է, թե շատ ավելի ուշ պիտի սկսվեր իրենց պատմական գրականությունը, որ առաջինի չափ անհրաժեշտ չէ: Իրոք էլ վրաց ազգի հայտնի պատմությունը, որ Զվանշիր պատմիչի գործն է և վրաց ազգի ծագումը՝ այն է ջրհեղեղից սկսելով հասցնում է մինչև Դավիթ Բ Վերանորոգիշ (1089—1125), չի կարող 11-րդ դարից առաջ գրված լինել: Ըստ այսա բոլոր վրացի պատմական աղբյուրներն էլ ժամանակակից Արմենելով Մեսրոպին, ինչ տեղեկություն էլ որ տան վրացական գրերի ծագման մասին, անվավեր են: Այս տեղեկությունները պետք է ընդունել միայն բանասիրական ենթագրություններ գործի պատմական ստուգությունից:

Ըստ այսմ վրացական գրերի ծագման, ինչպես առհասարակ վրաց պատմության շատ կետերի համար իրեն ժամանակակից և վայերական աղբյուր կարող են ծառայել հայ պատմագրիները և նրանց տված տեղեկությունները պետք է ընդունել ստիլողարար՝ առ ի շգոյի ուրիշ աղբյուրի: Ճիշտ այսպես է վարվում հայ քննական պատմությունն էլ մեր հնագույն շրջանի համար, որից չկան հայ աղբյուրներ, այլ կան միայն պարսիկ, հույն և Հռոմայիցի աղբյուրներ: Եթե հայ պատմագրը լավատեղակ աղբյուր չէ և կասկած կա, որ զանազան ձգտումներով փոփոխել է

պատմությունը, ինչպես է Խորենացին, այս պարագային պատմագրի տված տեղեկությունները կարելի է մերժել: Բայց եթե մեր ձեռքի տակն է այնպիսի հավատարիմ, լավատեղյակ, ժամանակակից և վստահելի մի աղբյուրը, ինչպես է Կորյունը, կարելի է միթե կասկածել նրա տեղեկությանց ճշմարտության վրա Հատկապես Կորյունի և վրաց գրերի գյուտի մասին խոսելով, նկատելով, թե Կորյուն լինելով վրաց աշխարհի եպիսկոպոս, երկար ժամանակ ապրած և թերեւ վախճանված Վրաստանում, ումանց կողմից մինչև իսկ վրացի կամ վրահայ համարված, անշուշտ շատ լավ ժանոթ պիտի լիներ գրերի դյուտի հանգամանքներին և ամենենին պատճառ չկա իր ասածները իբրև անվավեր մերժելու: Այսպես է մտածում նաև Մարկվարտ («Պատմութին հայ նշանագրերուա, էջ 41»), որ Կորյունի համար ասում է. «Պեսաք ենք ընդունիլ, թե Կորյուն այս եղածներուն (վրաց գրի գյուտի հանգամանքներին) շատ մոտանց ժանոթ էր, ըստ որում, ինչպես ինքն իսկ անձանը կպատճե, ինքն էր որ ի վիրս եպիսկոպոս եղավ»:

Կատկածել Կորյունի վրա նշանակում է առհասարակ ուրանալ պատմությունը:

Վրացիները այժմ ունեն երկու տեսակ գիր, ձեռվ իրարից շատ տարրեր, առաջինը կոշկուով է խուցուի, այսինքն եկեղեցական այբուբեն, որ իրենց հնագույն այբուբեն է՝ ձեռվ չափազանց նման հայոց երկաթագիր այբուբենին: Այդ այբուբենը առաջին անդամ տեսնողը փորձում է մինչև անգամ հայերեն կարդալ: Այս գրերով են գրված հին

\* Եարումակված ամսագրի 1954 թվականի № XI-XI-ից, XII-ից, 1955 թվականի № № I-ից, II-ից, III-ից, IV-ից, IX-ից և 1956 թվականի № № I-ից և II-ից:

ձեռագրերը, պատմական արձանապատճյուղները, և այժմ էլ զարծ են ածված եկեղեցական գրքերը և միսեղութի, ալ-կան գրքերում Եթիկորպն է միսեղութի, ալ-սինքն վիճական այբուրեն, որ բատ կարելուն ելուսպականացած ձև ունի. առաջին առաջարար կ կոր-կոր գծերով են ձեռուր բարակ և կոր-կոր գծերով են ձեռուր բարակ և այս է արդի ձեռագրում և առաջարար մասնական այբուրենը Մեսրոպի հարած այբուրենը խուցուրին միայն կարող է լինել:

Վրացիք չեն ընդունում, թե իրենց գիրը Մեսրոպն է հնարկ. Վախտանգ պատմագիրը իր Տարեկության մեջ պատմում է, թե վրաց այբուրենը հարեց իրենց Փարնավագ թագավորը, որ իշխում էր իր թիր թիր Փրփառուից 3 զար առաջ (302—237 թ. թ.), զի հիշումը, թե ո՞ր այբուրենն էր այն, ժողովրդական ավանդությունը կարծում է, թե մինչդրույին էր (տե՛ս Brosset, «Histoire de la Géorgie», Հատ. Ա, էջ 43); (Մանրամատն ան'ս նաև Մելիքսեթ-բեկ, և Հատոր, էջ 151, էջ 180 (ժան. 12) և Հատկապիս էջ 187—Պախտանզը):

Արդի բննիշներից ուժանը Մեսրոպի կողմնան, որիշներ՝ հակառակ: Հստ Խոհեմակ Հարությունյանի, Տիֆիսում կայացած «ընդհանուր հնագիտական մոլովի» նիստերից մեկում վրաց գիտնականները մերժում էին սուրբ Մեսրոպին բնողունել յուրաքանչյուր այբուրենի ստեղծողաւ:

Բրոսետ («Deux historiens arméniens», էջ 15 և «Histoire de la Géorgie», Հատ. Ա, էջ 43, 141 և մանավանդ Հատ. Գ, էջ 40—41) իրեն հաստատ և վավերական բնդունելով թի՛ Կորչունի և թի՛ Վախտանգի տված տեղեկությունները և այս երկուսին միմյանց հետ հաշտեցնել ուզենալով՝ ենթադրում է, թե Մեսրոպ հնարել է խուցուրին Վարագ-Բակուր թագավորի ժամանակ, իսկ Փարնավագ՝ մինչդրույին, որ նույն հեղինակի կարծիքով հնդկական այբուրենից առնված մի խառնուր է, և անգլուա («Collection des historiens arméniens», II, 162), կարծում է, թե վախտանգի հիշած այբուրենը խուցուրին է: Մյուլլեր («Über den Ursprung der arm. Schrift», էջ 434—435) ասում է, թե վրաց և Հայոց տառերի ստեղծողը մինույն անձն է, և երկուսի էլ ծագումը մինույն աղբյուրից է: Յառակման, պատմելով Հայոց և վրաց տառերի գյուտը բատ մեր պատմության, ամելացնում է. «Պետք է նկատել, որ շարաշար կսիսալվենք, եթե այս պատմության հիման վրա ընդունենք հայ և վրացի այբուրենների նմանությունը. թեև այս երկուսի մեջ կան նման տառեր, սակայն բոլորովն

տարրեր արժեք ունեն ...Հայ և վրացական տառերի զասավորությանն այնպիս է, որ ամելի հասկանալի կիներ, եթե ասեին, թե Մեսրոպ նախ զասավորեց վրացի այբուրենը՝ արամեական այբուրենի համեմատ և Հետո կազմակերպեց հայոց այբուրենը: Գուշացմիտ («Aegathangélos», ZDMG 31, 25) ստույգ է համարում, որ Մեսրոպ հնարեց վրաց և աղվանից գրերը Հյուրշման չեր ընդունում, որ վրաց գրերը Մեսրոպ է հնարել և Գարանավին տառմ է, որ սիալ է հայոց այն կարծիքը, թե Հայերենն զրերը վրաց այբուրենի հիմքն են կազմած ա, որ բնդհակառակը ուզգակի նույն այբուրենից է ծագումը: Մյուլլեր («Über den Ursprung der gruzinschen Schrift», Wien, 1898) ծաղրի է ենթարկում իր նախորդների այն կարծիքը, թե վրացերեն գրերը հնդկականից կամ զենդականից են առաջացած (էջ 5): Հաստատում է, որ մինչդրույին ծագած է խուցուրի բոլորըց: Եթե ասեինք, թե մինչդրույիից զարգացած է բոլորըց և բոլորըց էլ երկաթագիր խուցուրին, հնագրության պատմության ավանդածը սիալ է և հայոցը ավելի ճշգրիտ: Սրա երկրորդ ապացույցն այն է, որ վրացական գրերից երկաթագիր խուցուրին է նման Հայերեն տառերին և ո՛չ թե մինչդրույին վրացի գրերի մի մասը Հայերենի հետ նույն անունն ունի (թ. ի, կ, մ, ր, ւ, փ, հ): Հայերենի ձայնական գրությունը ճիշտ նույնն է, ինչ որ մրացականը: Ինչո՞ւ ուրեմն Մեսրոպ Հայերեն գիրը շավեց վրացոց (էջ 8): Սրանից պետք է ուրեմն հետեւցնել, թե կար հին վրացական այբուրեն, որ ծագած էր արամեականից (ինչպես Հայոց Դանիելյան այբուրենը) և որից Մեսրոպ ձեռկերպեց վրացական գրերը: Այսպիսով Հաստատելով վրացական գրի ծագումը արամեականից, ամելացնում է (էջ 11): Քրիստոնից առաջ 3-րդ դարում Փարնավագ թաղավորը բերավ արամեական այբուրենը և իր երկում գործածության դրեց: Մեսրոպ 5-րդ դարում ձեռափոխեց ու զարգացրեց այդ գիրը: Նկատելի է, որ այն բուն վրացական գրերը, որ չկան սեմականում (ծ, ց, ձ, չ և այլն), բնավ նմանություն չունեն հայ գրերի հետ, ուստի և Հայերենից չեն ծագում և Հետեարար Մեսրոպի ժամանակ արդեն կային: Սրանից հետեւմ է, թե արամեական գիրը վրացոց մեջ արդեն զարգացած է իր պակաները լրացուցած էր (էջ 11—12): Իսահակ

Հարությունյան կարծում է, թե վրացիք արդին ունեին հին անկատար մի այրութեն, որ 5-րդ դարում արդեն լիովին չէր համապատասխանում վրացերեն լեզվի պահանջներին, ուստի կանչեցին Մեսրոպին և սա էլ թարգմանների օգնությամբ կարգավորեց ու լրացրեց պահանջները, իսկ միներուկի այրութենը ուշ ժամանակի ծնունդ է, Վերջապես մեծապույն վրացագետ ն. Մատում է, թե «Վրաց այրութենը եթե Մեսրոպից հնարյած չէ, որ նե հայկականի վրա է ձեւված»: Peeters Է («*Revue des études arméniennes*», 9, 227) ընդունում է, թե այս այրութենի հեղինակը Մեսրոպն է:

Բայց բոլոր այս տարակարծիք տեղեկությունները, կասկածներն ու հերքումները շունեն ամեններն պատմական հիմք. ոմանք աղգասիրական աստան ունեն, մեծ ժաման վրաց անվավերական տեղեկությունը Կորյունի հետ մի կերպ հաշտեցնելու համար հերցուրիած բաներ, իսկ մյուսները, ինչպես Հյուրշմանինը, լոկ սկեպտիկան վերաբերմունք առանց պատճառարանության:

### § 7

Կան սակայն մի քանի կետեր, որոնք առենույթու հայկառակ են թվում մեր պատմագիրների ավանդածին և պիտք է դրազվել նրանց քննությամբ, ցույց տալու համար, թե ի՞նչ արժեք և զորություն ունեն նրանք:

ա) Կորյուն և մյուս պատմագիրները համաձայնությամբ Բակուրին համարում են վրաց այն թագավորը, որի ժամանակ Մեսրոպ հնարեց վրացերեն գրերը: Բայց վրաց պատմությունը այդ ժամանակամիջոցում Բակուր անունով թագավոր չի հշում: Բակուր կամ նման անուններով ժանոթ են վրաց պատմության մեջ՝

1. Բակուր Ա, որ Վաչէ թագավորի սրդին ու հաջորդն էր, Արշակունյաց ցեղից. նստել է 231—246 թ. թ.:

2. Բամար, որ թագավորեց 342—364 թ. թ. ևա Խոսրովյանց ցեղից էր և որդին ու հաջորդը Միրիան թագավորի, որի ժամանակ վրացիք բրիտաններություն ընդունեցին:

3. Բարգարաքար, Վարգարաքար կամ Վարագ-Բակուր, որ Միհրզատ Գ-ի որդին ու հաջորդն էր և նստալ 379—393 թ. թ.:

Սրանցից հետո զալիս են կարգով Տիրզատ (393—405 թ. թ.), Փարսման (405—408 թ. թ.), Միրդատ Դ (408—410 թ. թ.), որ պարսից Ուգարարի իշխանից հաղթվելով գերի թշվեց, Արշի Ա (410—434 թ. թ.), Բակուր Բ (514—528 թ. թ.), Բակուր Գ (557—570 թ. թ.):

Ինչպես տեսնում ենք, այս ժամանակաբրությունը Կորյունի հետ չի հաշտվում: Հաշ-

տություն գոյացնելու համար իզուր է ըստ Ան-Մարտինի («*Histoire du Bas-Empire*», V, 324) ենթադրել, թե մեր պատմության մեջ հիշված Բակուրը վրացական փոքր մի հշխան էր և հետևաբար գործ չունի վերի թագավորների հետ: Բողնելով հնագույն և նորագույն անունները՝ թիւ թե շատ հարմարողներն են Վարագ-Բակուր (379—393 թ. թ.), Փարսման, Միրզատ և Արշի. առաջինը անունով իսկ մյուսները՝ թվականով: Կարելի էր կարծել, թե ուղիղն է Վարագ-Բակուր և հետևաբար վրացական գրերի գյուտը եղավ 379—393 թվերին: Բայց որովհետև հայերեն ցըւուը 409 թվից հետո է և վրացերեն գրերը մի քիչ ավելի ուշ գտնվեցին, ուստի այս հնագործությունը չի կարող ընդունվել:

Բայց արդյոր ի՞նչ ապացուց ունենք, թե ստույգ են վերի թագավորներին տրված թվականները: Եթե իրենք աղբյուր են ծառայում հետին շրջանի վրացական տարեգործթյունները, նրանց արժեքը հայտնի է: Անտարակուսն է, թե հայոց պատմական գրականությունը շատ ավելի հարուստ է, քան վրացականը. մենք շատ ավելի առիթներ ենք ունեցել արտաքին պատմության մեջ հիշատակվելու մինչև այժմ եղած են րազմաթիվ հետազոտությունները: Բայց դեռ ինչքան հետու ենք մեր թագավորների հաջորդության և պատմական գիտակոր գելքերի ստույգ ժամանակագրությունը ունենալուց: Նոյնիսկ մեր գրերի գյուտի թվականը կատարելապես ստուգված չէ: Եթե այս այսպես է, ապա ինչքան ավելի վրաց ժամանակագրությունը, որ ավելի ավանդական գոյն ունի և հետազոտության մեծ կարուտություն: Օրինակ՝ Կորյուն Բակուրից հետո, Մեսրոպի հինգերորդ ճամբրորդություն ժամանակ, վրաց թագավոր է զուտ Արձյուղ, որ ըստ Կորյունի գեր նոր էր թագավորել այն ժամանակները, այն է մատավորական 424 թիին: Այս Արձյուղը վրաց պատմության մեջ էլ է հիշվում Արշի անունով: Բայց ի՞նչ թվական է տրվում իրեն: Ահա թե ինչպիսի խառնակություն: ըստ Կալաբրութի՝ 413, ըստ Ան-Մարտինի՝ 413, ըստ Պարնի՝ 410—474 կամ 397—421, ըստ Բրասսակի՝ 410—434 թ. թ.: Ո՞ր ընդունենք Մրանցից հետեւմ է, թե վրաց պատմության ժամանակագրությունն ընդհանրապես և Մեսրոպի շրջանի ժամանակագրությունը ժամանակությունից անստավիս (հենց Արձյուղի անստավիդ թվականի պատմառությունուն) նույնպես կարուտ է բննության, ուստի բնավ չի կարող ներկա վիճակում հերքել մեր պատմության տված տեղեկությունները: Ինչպես վրաց ժամանակակից և վակերական պատմիչները մեր պատմության համար, նույնպես և մեր ժամանակակից և վակերական պատմիչները վրաց պատմու-

թյան համար ամենքից ավելի առաջնակարգ նշանակություն պետք է ունենան պատմական դեպքերն ու թվականները հշտակու համար:

Դարձնելով խոսքը մեր բուն նյութի վրա, կարող ենք համարձակ կերպով ասել, թե մեր պատմության (Կորյունի) մեջ ժիշված Բակուրը ամենին արիշ մարդ չէ, եթե ոչ Վարազ-Բակուրը, և թե սրա թափակրության թվականը պետք է գոնե 16 տարի ասաց տառելով՝ բերել հասցնել 409 թվով, որ ժամանակ եղած պիտի լինի նաև վրացական դրերի զյուտը Մեսրոպի ձեռքով:

Այսպես է ժամանակ նաև Բրուսի («Histoire de la Géorgie», Հատ. 3-րդ, էջ 41),

որ վրաց գրերի զյուտը գոնում է 406 թվին:

Կորյունի մեջ Բակուրից հնատ ճիշվում է, ինչպես ասացինք, Արձյուղ, մինչդեռ վրաց պատմության մեջ արև երկուսի միջև կան Տիրդատ, Փարսման և Միրդատ, որոնք իշխում են 393—410 թվերին, որ է բնդամենը 17 տարի: Մենք Բակուրից մինչև Արշիլի գահակալությունը ունենք 25 տարի և կարող ենք բաժանել նրանց վրա, մի քիչ շարժելով միայն սրանց թվականը: (Այս ժամանի ավելի ընդարձակ տե՛ս զյուտի տասնինեցերորդ):

բ) Մյուլեր հարց է տալիս, թե երեւ Մեսրոպ մացրեց վրաց մեջ գրականությունը, հասկա ինչո՞ւ շավագ նրանց մեր հայերեն այբուրենք, այլ բոլորովին ուրիշ այբուրեն հնարեց: Սրանից Մյուլեր ուզում է հետեւընել, թե վրացիք արդեն ունենի անկատար մի այբուրեն, որ մի քանի տասներ համեմուլով լրացրեց Մեսրոպ: Բայց մենք վերելում տեսանք, թե ինչո՞ւ Մեսրոպ հայերեն տառերը չտվեց վրացիներին: Այն ժամանակի մարդկանց համար այնքան բնական բան էր ամեն ազգի առանձին լեզու և ամեն լեզվի առանձին տառ ունենալը, որ բոլորովին անըմբունելի պիտի լիներ վրացոց հայերեն տառ գործածելը: Արեւելում նոյնիսկ այսօր շատերին անհասկանալի է թվուալ լսել, թե բոլոր եվրոպական ազգերը միենալուն լատինական տառերը են զործածում, կամ թե Ավստրիան գերմաներին է խոսութ, Բելգիան՝ Ֆրանսիերեն, Ամերիկան՝ անգլիերեն և այլն:

զ) Ֆարանդանը նկատում է, թե Հայ և վրաց տառերը նման են, բայց այդ նման տառերը միենույն արժեքը չունեն: Օրինակ՝ վրաց երկրորդ տառը Վ՝ նման է մեր Վ՝ տառին, բայց արժեքով թէ: Վրացերեն ն բոլորովին նույն է մեր Ն տառի հետ, բայց վրաց մեջ պ հրնչուն ունի: Այսպէս և ուրիշներ Բայց մի՛ թե սա ապացույց է, թե Մեսրոպ չէ վրացերեն տառերը ննարողը: Եթի Մեսրոպ ուզեց վրացիներին տառ նոր այբուրեն, անշուշտ պիտի աշխատեր որքան կարելի է հնանալ հայ

ձեերից: Նոյնիսկ եթի վրացերեն գրերը հայերենին բացարձակ հակոտնյա կազմենին, դարձյալ չին կարող մերժել Մեսրոպի մատուր Գրերի բնդանուր ձեր, զրադրական ունի, ուրավագերի բնարաց նկարագիրը՝ ահա թե ի՞նչն է կազմում հայ և վրաց տառերի նմանությունը: Այս նմանությունը կա և կմնա, ցոյց առաջ համար, թե երկու այբուրեններն էլ միենայն նկարողի գծապրություն են: Բայց տակավին հարց է, թե ինչքա՞ն իրավունք ունի Յառավագան և թե Մեսրոպ ինչքա՞ն հաշողի է տարրեր ձեեր առաջ վրաց գրերին: Այս կետը պարզված կլինի մեր աշխատության երրորդ ժամանում:

զ) Նոյն հեղինակը տարօրինակ է գտնում այն հանգամանքը, որ մինչդեռ հայերենին, վրացերենին և հունարենին բնդանուր եղող տառերը միենույն շարրավ են զնում երեք այբուրենների մեջ էլ, բնդակառակը՝ հայերենի և վրացերենի հարստությունը կազմող գրերը հայ այբուրենում գրված են մյուս գրերի մեջները, իսկ վրացական այբուրենում շարված են բ տառից հետու Այս պատճառով ահա հեղինակն ասում է, թե «ամելի հասկանալի կլիներ, եթե ասվեր, որ Մեսրոպ նախ զասագործեց վրաց այբուրենը՝ համեմատ արամեական այբուրենի, և հետո կազմակերպեց հայ այբուրենը: Մենք զարժանում ենք միանք, որ այսպիսի չնշին պատճառարանություններից նղրակացություններ են ուզում հանել: Մեսրոպ նախապես հնարելով հայերեն տառերը, բնականարար պիտի տար նրանց ա՛յն շարքը, որ իրեն գրեն պիտու կարելի էր զետեղել երեք ձեռվ այբուրենի սկիզբը կամ մեջները և կամ վերջը: Որովհետեւ սկիզբը զետեղել անպատճէ: և յոյու բոլոր այբուրեններին անհամաձայն կլիներ, որովհետեւ վերջը զետեղելն էլ մի տևակ խնդրում առաջ պիտի բերեր (ինչպես և այժմ ուսուց այբուրենի վերջում գրված Ա, Կ, Ա, Ց, Ե, Զ, Խ, Ա, Ա, Ա տառերը), ուստի Մեսրոպին մնում էր զետեղելի այդ տառերը մյուս գրերի մեջտեղերը: Եթու հետ էլ հնարեց վրացերեն այբուրենը, առաջնորդվելով այն սկզբունքով, որ պետք է տալ վրացերենին տարբեր այբուրեն, մասձեց նոյն ամելի տառերը զետեղելի այբուրենի վերջը, ինչպիս արել են ուսուները: Այսպիսակ վրացական այբուրենը կլիներ հայերենից թե՛ ձեռվ և թե՛ շարրավ տարբերը: Այս պետք ո՛չ զարմանալու բան կա և ոչ է տարօրինակ նղրակացություններ հանելու տեղիք:

հ) Գարանտուզինը նկատում է, որ վրաց, այբուրենը թե՛ ձեռվ, թե՛ զասագորությամբ և թե՛ թվական արժեքով ավելի է նման հունարենին, բան հայերենը: Զեով նմանություն աւելով հասկանում է տառերի գծապրությունը.

օրինակ վրաց Փ, փ սառերը, որոնց հայերեն համապատասխաններն են Փ, Ք, ավելի նման են Հունարեն Փ, Լ տառերին, բան. թե Փ, Ք: Դասավորությամբ էլ վրացին դարձյալ ավելի նման է Հունականին բան հայերենը. որովհետ հայերենը մեշքը է ներմուծում իր հարստոթյունը կազմող նոր տառերը, մինչդեռ վրացականի մեջ այրութենի վերջն ևն դրված: Մրանով հույն տառերի շարքը խախորված չէ: Վրացի այրութենի թվական արժեքը սկզբից մինչև վերջը հունարենին համապատասխան է, մինչգետ հայերենը Զ=Ե թվից սկսած բաժանվում է հույնից: Այս հանդամանքներից հետեցնում է Գարտհառվեն, թե վրացի այրութենը անկախ է հայկականից և հայ գրերը չեն, որ հիմք են ծառայել վրացերենի, այլ հույն այրութենը:

Գարտհառվենի մատառությունը և նրանից հանած հետեւթյունը բոլորովին ճշշտ են. բայց ամեննեին վերաբերությունը շունեն Մեսրոպի հեղինակության հետ: Եթե ասենք, թե Մեսրոպ հայերենի վրացից է ձեւել վրացական գրերը, այս ժամանակ կարելի էր մեր ասածը վերի պատճառաբանությամբ հերքել: Բայց պատճությունը այդպիսի բան չի ասում և ամեննեին բնական էլ չէ, որ Մեսրոպ հունարենից հայերեն, հայերենից վրացերեն և ուրեմն վրացերենից էլ ազգաներեն՝ գրեռը հնարած լինի: Պատճությունը տալիս է միայն իրողությունը, թե Մեսրոպ իրար ետեւից հնարեց այդ երեք այրութենները (նախ հայերեն, հետո վրացերեն և հետո ազգաներեն). և բանասիրության գործն է գտնել և ցուց տալ, թե Մեսրոպ ի՞նչ աղբյուրներից հանեց այդ տառերը: Վրացի տառերի ավելի նմանությունը հունարենի հետ կարելի է այսպես մեկնել:— Մեսրոպ հնարեց հայերեն գրերը, չանաց տալ նրանց ո՛չ թե ճշշտ ու ճշշտ հունական գրերի ձեր, այլ նրանցից մի թիւ տարրեր երևոյթ, այնքան, որ կարենար առանձին այրութեն ձևացնել: Երբ սկսեց կազմել վրացի գրերը, արդեն հայերենը կազմած լինելով չէր կարող նրանցից ամելի տարրեր ձեր հնարել, վախենալով, որ գրերը բոլորություն չհնառանան բնատիպ ձեկից. ստիպված էր ուրեմն ամելի մոտենալ հունականին. մի բան՝ որից խոսափել էր նախապես դիտամբը: Դասավորության տարրերությունը արդյունք է այն գրերի համելութին, որի վրա խոսեցնք շորքորդ կետում: Իսկ թվական արժեքը բնական հետեւթյունն էր զասավորության այս ձեփի: Հայոց համար բնավ հետաքրքրական էլ չէր, թե այսինչ գիրը հունարենում ի՞նչ արժեք ունի. որովհետեւ եթե այս բանին կարենորություն տված լինենին, կամ անպատճառ հայերեն գրերը հունարենի շարքով պիտի դասավորենին, կամ ո՛մ նորա-

մուտ գրերին թվուկան արժեքը չափատի տալիս և կամ թվական արժեքը խառն ձևով դասավորած պիտի լինենին, ինչպես արել են արարները համեմատությամբ երրայական գրերի (այս հանաւ հաշվիվ):

Այս հինգ առարկությունները չնշելոց հետո, ուրիշ բան չեղ մնում մեղ անել, եթե ու երկրորդ անգամ շեշտել, թե հակառակ աղբյուրները արժեք չունեն այս ժամանին, իրենց պիտի տեղեկությաններու ու ժամանակագրությունը միաւ են, և թե իրեւ միակ ժամանակակից և վավերական հեղինակ, ուստի և իրեւ միակ հիմնական աղբյուր մնում է Կորյունը, որի ասածները կասկածելի համարելու պատճառ չկա բնակվ:

### § 8

Հատկապես պիտի է հիշել Մարկվարտի կարծիքը վրաց գրերի ծագման մասին («Պատճություն հայ նշանագրերու», էջ 41): Այս պիտուականը հիմք է բանում նախ Կորյունի հետեւյալ խոսքը. «Եւ առնոյր կարգեալ նշանագիր վրացերէն լեզուին, ըստ շնորհեցելոյ նմա ի Տեսանէ» (Կորյուն, էջ 15): Մրանից հետեցնում է, թե վրացերեն գրերը հայերեն գրերի կազմապարի վրացից կարգվեցան: Վրացիների ձայնական դրությունը նույն է հայերենի հետ՝ անշան տարրերությամբ (շունի թ, ունի ղ և ն): Ուստի Մեսրոպ հայերեն գրերը պիտի տար վրաց: Իսկ եթե այսպես չի վարվել և նոր այրութեն է հնարել, ուրեմն կար Վրաստանում գործածական մի այրութեն, որին ստիպված էր հետեւյել: Բայց որովհետեւ վրացերենի ձայնական դրությունը այնքան հարուստ է, որ անկարելի է ենթադրել, թե որևէ մեկը Մեսրոպից առաջ փորձ է արել որևէ գրով վրացերեն գրերու, ուստի պետք է ենթադրել, թե Մեսրոպին հիմք ծառայող այդ այրութենը այն օտար այրութենն էր, որ գործածվում էր Վրաստանում օտար լեզվով պաշտոնական գրություններ դրելու համար: Դա պիտի լինի խուրարեկմյան այրութենը, որ ծագում էր արամականից և գործածվում էր ապարակիների մուտ Մեսրոպի կազմած այս այրութենն է խուցուրին:

Եթե ուզենանք ամփոփել վերոհիշյալ դատողությունները, կունենանք հետեւյալ թեզիսները.

ա) Վրացերենի համար ո՛չ մի այրութեն հնարված չէր:

բ) Վրաստանում գործածվում էր օտար (պահապակական) լեզվով գրությանց մեջ խուրեկմյան այրութենը:

գ) Մեսրոպ ստիպված էր հետեւյալ նրան:

դ) Մեսրոպ հայերենի օրինակով կազմեց վրացական այրութենը:

Այս լորս թեզիսներից առաջինը բոլորովմին ճիշտ է, այնպես ինչպես հայոց համար էր երկրորդ թեզիսը ճիշտ չէ, ո՞վ է ասում, թե Վրաստանում միայն պահապերին էին գրում. եթե տարրերինը անդորրածածկան համարինը, ինչո՞ւ պիտի մերժենք հունարինը, ո՞վ ասաց, ո՞վ վկայեց ի ինչպէս ատպացուցեց, որ վրաց զրած պահապերինը «խոտարհղմյան» այլուց բնով էր և ոչ թի այն սովորական այլուրենով, որ զրծածական էր պարսկական արքանիքում, Հայաստանում, Աղքանքում և այլուր: Երբորդ թեզիսը բոլորովմին անհասկանալի է. ինչո՞ւ Մեսրոպ ստիպված պիտի լիներ Հնունել ենթագրյա «խոտարհղմյան» այլուրինին և ոչ թե, օրինակ, ասարականին, հունականին, սովորական իրանյանին և կամ որին որ ուղենար: Չորրորդը նույնպես բոլորովմին անձիշտ է, Կորյունի «բատ շնորհցելոյ նմա ի Տեառնէ» բառերը ամեննին հայերին տառերը չեն ակնարկում, այլ իր աստվածային կարողությունը եթի Կորյուն ասած լիներ «բատ շնորհցելոց նմա ի Տեառնէ նշանագրցն» (Տիրացից իրեն շնորհված տառերի համաձայն), այն ժամանակ կարելի էր հայերին տառերը հասկանալ: Խսկ այստեղ պարզապես թարգմանում ենք «սկսեց կաղմել վրացերին տառերը՝ իր աստվածանորդ կարողությամբ»: Գրեթե նույն բանն է ասում Կորյուն նաև ազգանից գրերի հորինման մասին խոսելիս, «Առնէր ապա նշանագրու, բայ վերնապարդ կորովի սովորութեան իւրում և յաջողութեամբ քրիստոնութեամբ»:

## Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

1. Մեսրոպ մի հանի օգնականներով զեռում է. Գողըն զավար զիր և ուսում տարածելու. իրեն օմանդակեցին Գողընի իշխանը Շարար և նրա որդին Գրուտ:— 2. Ավանդում են, թե Մեսրոպ բնակիլ է Մարգարենու գյուղը և այնտեղի եկեղեցին իմբն է կառուցել: Այս ավանդույթը բխում է. Հայսմափուրից և նիմերված է կեղծ ստուգարանուրյան վրա:— 3. Մեսրոպ Գողընից անցավ Սյունիք, ուր Երկար ժամանակ մնաց. Վաղինակ իշխանի և սրա հաջորդ Վասակ Սյունի իշխանի օգնուրյամբ համանացի ամենամեռու անկյուններն անզամ դպրոցներ բաց արեց. իրեն հաջորդ նշանակեց իր աշակերտ Անանիա Սյունիցուն:— 4. Սյունիիում Մեսրոպ հնարեց վրացերեն այրութենք. մի հանի աշակերտներով անցավ Վրաստան. վրաց Բակուր բազավորի հրամանով աշակերտներ հավաքվեցին և Մեսրոպ բաց արեց առաջին վրացական դպրոցները: Գրականուրյունը միացրեց վրաց բաժան-քածան գեղերին: Մեսրոպ դարձավ Վաղարշապատ:— 5. Մյուս պատմագիրների (հատկապես Խորենացու) տված տարբերուրյունները վրաց լուսավորուրյան մասին անհիշտ են:— 6. Վրացական աղբյունների տված տեղեկուրյունները և արդի եվրոպացի բննիշների կարծիքը վրաց այրութենի ծագման մասին:— 7. Նրանց ննադադատուրյունը և բվականի խընդիրը:— 8. Մարկվարտի կարծիքը և նրա բընուրյունը:

(Ծառունակելի)